ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«6» մայիսի 2016թ.

Հաստատում եմ՝
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետ Մ. Անանյան

ԳԲԽ-40/16 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 18.04.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. **«Նոր-Էներջի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը**

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին 18.04.2016թ. ներկայացրած բողոքով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից՝ Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց

ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) հայտ են ներկայացրել նաև «Ուկրշին» ԲԲԸ-ն և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության համաձայն՝ «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Ուկրշին» ԲԲԸ-ին, 2-րդ չափաբաժնի համար 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Դելտա Ինտեգրալ» ՍՊԸ-ին:

Ըստ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի՝ «Ուկրշին» ԲԲԸ-ի և «Դելտա Ինտեգրալ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգին ներկայացված հայտերում առկա են հրավերով սահմանված պահանջներին անհամապատասխան լրացված փաստաթղթեր, մասնավորապես՝

- «Ուկրշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնություն N «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01»-ում սխալ է լրացված «Գնման առարկայի անվանումը»: «Գնման առարկայի անվանումը» փոխարեն լրացվել է չափաբաժնի անվանումը: Պատվիրատուն Հրավերի ձև-ի մեջ պահանջել է լրացնել «Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և կամ Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման» գնման առարկայի անվանումը, որն էլ ըստ հրավերի հանդիսանում է «Գնման առարկային անվանումը»-ը:
- «Վճարման պահանջագիր»-ում պահանջվում է լրացնել «Գումարը բառերով» և «Գումարը (ԲԱՌՈՎ)» տողերում վճարվող գումարի արժույթը տառերով, որը ևս չի լրացվել: Ըստ բողոքարբերի՝ սխալ է լրացվել նաև ներկայացման տարեթիվը, որոնք ևս չեն համապատասխանում հրավերի պահանջներին:
- «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնություն N «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01»-ում թերի է լրացրել «Ընկերության տնօրենի անուն ազգանունը, անձնագրային տվյալները»-ը, լրացված է միայն անձնագրի սերիան և համարը: Այն դեպքում, երբ անձնագրային տվյալների նվազագույն պահանջներն են՝ անձնագրի սերիան, համարը, տրման ամսաթիվը (օր, ամիս, տարի) և ում կողմից է տրված:
- Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնություն N «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01»-ում չի ստորագրել գլխ. հաշվապահը:

• «Վճարման պահանջագիր»-ում պահանջվում է լրացնել «Գումարը (ԲԱՌԵՐՈՎ)» տողերում վճարվող գումարի արժույթը տառերով, որը ևս չի լրացվել:

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն նշել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը և որոշումը կայացվել է օրենքի խախտումներով, ինչը չի բխում ՀՀ գործող օրենսդրության պահանջներից: Ըստ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի՝ խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի, 1-ին, 2-րդ և 3-րդ կետերը, ՀՀ կառավարության 10.02.2015թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետը և այլն:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում հայտերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը կամ գնային առաջարկը կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

«Նոր-Էներջի» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ճիշտ չի կատարել գործողությունները, ճիշտ չի գնահատել «Ուկրշին» ԲԲԸ-ի և «Դելտա Ինտեգրալ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտերը:

Ընկերությունը նշել է նաև, որ «Ուկրշին» ԲԲԸ-ի և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 9-ը՝ տուժանքի մասին համաձայնություն N «ՀՀԼՄ-ԲԸԱԾՁԲ-16/01» և «Վճարման պահանջագիր»-ը լրացված են Ընթացակարգի հրավերի պահանջներին անհամապատասխան և ենթակա են մերժման:

Ըստ Ընկերության Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի գործողությունները սուբյեկտիվ են, հանձնաժողովի գործողությունների արդյունքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքով երաշխավորված մրցակցության, հավասարության սկզբունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ընկերությունը խնդրել է.

1. Դադարեցնել ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման

աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները՝ «Ուկրշին» ԲԲԸ-ի և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի հայտերը հրավերի պահանջներին բավարար ճանաչելու, «Ուկրշին» ԲԲԸ-ին և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասով:

2. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

2. <u>ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները</u>

ՀՀ Լոռու մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 22.04.2016թ. գրությամբ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

1. «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի ընտրված մասնակից «Ուկրշին» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 9-ում գնման առարկայի անվանման դաշտում ընկերությունը գրել է այն չափաբաժնի գնման առարկան, որի համար հայտ է ներկայացնում, որը խախտում չենք համարում, մանավանդ որ, գնման առարկայի անվանումով չի որոշվում, թե մասնակիցը որ ընթացակարգին է հայտ ներկայացնում: Բողոք բերող անձը սխալ լրացված է համարում նաև վճարման պահանջագրի «Գումարը բառերով» դաշտը՝ նշելով, որ գումարի արժույթը տառերով գրված չէ, սակայն վճարման պահանջագրի լրացման պահանջների համաձայն՝ աղյուսակի վերևի «արժույթը» դաշտում տառերով գրված է «դրամ», որը տարածվում է վճարման պահանջագրում նշված բոլոր թե թվերով և թե տառերով գրված գումարների վրա: Ինչ վերաբերում է լրացված ներկայացման տարեթվին՝ «2016», ապա վճարման պահանջագրի լրացման պահանջների համաձայն՝ ներկայացման ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, իսկ տարեթիվը հաստատ չի փոխվում, քանի որ հայտի ապահովման գործողության ժամկետը վավեր է մինչև օրենքին համապատասխան պայմանագրի կնքումը, մասնակցի կողմից հայտի հետ վերցնելը, հայտի մերժումը կամ տվյալ ընթացակարգը չկայացած հայտարարվելը:

2. «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի ընտրված մասնակից «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 9-ում լրացված են ընկերության տնօրենի անձնագրի սերիան և համարը, իսկ ըստ բողոք բերող անձի՝ անձնագրային տվյալների նվազագույն պահանջներն են՝ անձնագրի սերիան, տրման ամսաթիվը և ում կողմից է տրված, սակայն մեզ հայտնի չէ որևէ իրավական փաստաթուղթ, որտեղ սահմանված են այդ նվազագույն պահանջները: Բողոք բերող անձը նաև փաստարկում է, որ տուժանքի մասին համաձայնությունը ստորագրված չէ գլխավոր հաշվապահի կողմից, սակայն «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի հայտը պատրաստելու հրահանգում՝ որպես պարտադիր պայման նախատեսված է, որ հայտում ներառված բոլոր կնքված փաստաթղթերը պետք է ստորագրված լինեն կնքողի կողմից, որը «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 9-ում առկա է, իսկ գլխավոր հաշվապահ ընկերությունը կարող է և չունենալ: Ինչ վերաբերում է բողոք բերող անձի կողմից շահարկվող վճարման պահանջագրում «Գումարը բառերով» դաշտում արժույթը տառերով գրված չլինելու հանգամանքին, ապա հայտնում եմ, որ վճարման պահանջագրում առկա է «Գումարը բառերով» երկու դաշտ, որոնցից մեկում արժույթը տառերով գրված է, որը համարում ենք բավարար հասկանալու, որ նշված գումարը ներկայացված է ՀՀ դրամով:

Պատվիրատուն տեղեկացրել է, որ «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը բավարար հիմքեր չի ունեցել գնման ընթացակարգի ընտրված մասնակիցներ «Ուկրշին» ԲԲԸ-ի և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի հայտերը մերժելու համար:

Պատվիրատուն նշել է, որ Ընթացակարգի 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն հայտով ներկայացրել է, որ գնման ընթացակարգին մասնակցում է համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով), սակայն չի ներկայացրել համատեղ գործունեության պայմանագիրը: Բացի այդ, համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրված եզրակացության՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի վերջին երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է ընդամենը 355000 ՀՀ դրամ, որը որպես «Ֆինանսական միջոցներ» չափորոշիչ չպետք է պակաս լինի ներկայացված գնային առաջարկից՝ այսինքն «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի կողմից ըստ չափաբաժինների ներկայացված

90653304 ՀՀ դրամ և 13749432 ՀՀ դրամ գնային առաջարկների հանրագումար 104402736 ՀՀ դրամից:

3. <u>ԳԲԽ-40/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>

ԳԲԽ-40/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից՝ ***Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների*** ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգ:

2. Ընթացակարգի Հրավերի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությամբ, ***որպես գնման առակա նշվել է*** Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և կամ Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում:

3. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 12-րդ կետի համաձայն՝ գումարը (թվերով և բառերով) դաշտում պարտադիր լրացվում է շահառուին վճարման ենթակա գումարը:

4. «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 13-րդ կետի համաձայն՝ «արժույթը (բառերով և/կամ կոդով)» դաշտում պարտադիր լրացվում է արժույթը:

5. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ՝ են ներկայացրել նաև «Նոր-Էներջի» ՍՊԸ-ն, «Ուկրշին» ԲԲԸ-ն և «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն:

6. «Ուկրշին» ԲԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությամբ, ***որպես գնման առակա*** նշել է Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում:

7. «Ուկրշին» ԲԲԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի գումարը բառերով դաշտում

նշել է շահառուին վճարման ենթակա գումարը, իսկ ***գումար դաշտում նշել է դրամ՝ բառերով, ինչպես նաև լրացվել է նաև պահանջագրի ներկայացման տարեթիվը:***

8. «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի ***գումարը բառերով դաշտում նշել է շահառուին վճարման ենթակա գումարը և արժույթը՝ ՀՀ դրամ բառերով (երկու հարյուր քառասուն հազար ՀՀ դրամ):***

9. «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության մեջ նշել է ***«Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի տնօրենի անուն ազգանունը և պահանջված անձնագրային տվյալները, այն է՝ անձնագրի սերիան ու անձնագրի համարը, իսկ գլխավոր հաշվապահի ստորագրությունը բացակայում է:***

10. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 29.03.2016թ. ժամը 10:00-ին տեղի ունեցած նիստի N 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին չափաբաժնի համար 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Ուկրշին» ԲԲԸ-ին, 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի համար 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել՝ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ին, որպես Ընթացակարգի հրավերի պահանջները բավարարող և համապատասխանաբար ցածր գին ներկայացրած մասնակիցներ:

11. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 07.04.2016թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N 4 արձանագրության.

- 1-ին կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի 1-ին չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած «Ուկրշին» ԲԲԸ-ի և 2-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած «Դելտա Ինտեգրալ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հրավերով նախատեսված որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատել որպես «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող:

• 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է Ընթացակարգի 1-ին չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին տեղը զբաղեցրած «Ուկրշին» ԲԲԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից ճանաչել՝ 1-ին տեղը զբաղեցրած «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ին, որպես Ընթացակարգի հրավերի պայմանները բավարարող և ամենացածր գին ներկայացրած մասնակիցներ:

12. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-40/16 բողոքը քննող հանձնաժողովի, 22.04.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. <u>ԳԲԽ-40/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 18.04.2016թ. ներկայացրած բողոքը, ՀՀ Լոռու մարզպետարանի 22.04.2016թ. գրությունը և կից ներկայացված փաստաթղթերի պատճենները, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Գտնում ենք, որ «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնությունը և Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագիրը լրացվել են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան: Մասնավորապես, «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով տուժանքի մասին համաձայնության մեջ նշել է «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի տնօրենի անուն, ազգանունը և պահանջված անձնագրային

տվյալները, այն է՝ անձնագրի սերիան ու անձնագրի համարը, իսկ վճարման պահանջագրի գումարը բառերով դաշտում նշել է շահառուի վճարման ենթակա գումարը և արժույթը երկու հարյուր քառասուն հազար ՀՀ դրամ:

Ինչ վերաբերում է հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության մեջ գլխավոր հաշվապահի ստորագրության բացակայությանը, գտնում ենք, որ այն չի կարող լինել պարտադիր պայման, քանի որ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հաշվապահական հաշվառման աշխատանքների ծավալից կախված՝ կազմակերպության ղեկավարն իրավունք ունի հաշվապահական հաշվառումը վարել անձամբ, այսինքն՝ կազմակերպությունը կարող է նաև չունենալ գլխավոր հաշվապահ:

Ուստի գտնում ենք, որ «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 18.04.2016թ. ներկայացրած բողոքը այս մասով անհիմն է և ենթակա է մերժման:

«Ուկրշին» ԲԲԸ-ի Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտի թիվ 9 հավելվածով հայտի ապահովման վերաբերյալ տուժանքի մասին համաձայնության անբաժանելի մաս հանդիսացող վճարման պահանջագրի ներկայացման տարեթիվը նշելու կապակցությամբ հայտնում ենք, որ «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգ»-ի 2-րդ կետի համաձայն՝ «Վճարման պահանջագրի» ներկայացման ամսաթիվը ***պարտադիր լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին <u>վճարման պահանջագրի ներկայացման օրը,</u> ուստի «Ուկրշին» ԲԲԸ-ն նշելով վճարման պահանջագրի տարեթիվը, խախտել է Հրավերով սահմանված պահանջները:***

Այսպիսով գտնում ենք, որ այս մասով բողոքը ենթակա է բավարարման, ուստի ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք «Նոր-Էներջի» ՍՊԸ-ի 18.04.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի.

1. ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԼՄ-ԲԲԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար ճանաչելու, «Դելտա-Ինտեգրալ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից

ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասին որոշումները դադարեցնելու պահանջը մերժել:

2. Դադարեցնել ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման և Ճոճկանի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀԼՄ-ԲԸԱՇՁԲ-16/01» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշումները՝ «Ուկրշին» ԲԲԸ-ի հայտը հրավերի պահանջներին բավարար ճանաչելու, «Ուկրշին» ԲԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու մասով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-40/16 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան